

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

Ա.

Մ Ա Յ Ր Ա Թ Ո Ռ

Վեհափառ Հայրապետի օրհնութեան անդրանիկ կոնգակը, որ կազմուած է հին ձեռագրերի զարդանկարներով, Հայ եկեղեցու լուսաւորիչներին, Մասի, Ս Էջմիածին և Հայրապետական դրօշներին պատկերներով առաքւում է ի սփիւռս աշխարհի Հայ հոգեւոր վարչութիւններին, եկեղեցիներում՝ ընթեռնու համար: Տպել ենք Արարատում՝ նոյն կոնգակը:

Վեհափառ Հայրապետն ազգիս ի նկատի ունելով, որ վանական մի քանի պաշտօններ բաց են մնացել, պաշտօնեաներ ընտրելու համար Սինօգի նախանդամ Տ. Գէորգ Արքեպիսկոպոսի անունով տուեց հետեւեալ կոնգակը:

ՄԱՏԹԷՈՍ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ... Գերաշնորհ նախանդամոյ Սինօգի Սրբոյ Էջմիածնի Տ. Գէորգ Արքեպիսկոպոսի Սուրէնեան հարազատի Մայր Աթոռոյս նուիրեմք ողջոյն հանդերձ Հայրապետական օրհնութեամբ:

Ըստ կոնգակի մերում ի 15-ն Հոկտեմբերի անցելոյ ամի թ. 153, Բարձր Սրբազնութիւնն Ձեր գումարեալ զմիաբանական ժողով՝ ետ ընտրել զայլ և այլ պաշտօնեայս վասն հաստատութեանց Մայր Աթոռոյս, Զարդիս, օրպէս գիտէ և գերաշնորհութիւն Ձեր, կարգմամբ Տ. Իսահակ վարդապետի ի պաշտաման վանահայրութեան Ս. Խաչ վանուց Հին-Խրիմու տպարան Մայր Աթոռոյս մնայ առանց տեսչի, նոյնպէս և ի պատճառս ոչ հաստատեալ գոլոյ ի մէնջ ընտրեալ ի ձեռն միաբանական ժողովոյդ նախագահ վանական կառավարութեան Մայր Աթոռոյս՝ վերջինս մնայ

առանց նախագահի, բայց յայսցանէ ի կազմէ գիւանական խորհրդոյ մերոյ պակասի անձնափոխանորդ անդամ մի։ Վասնորոյ այսու կոնգակաւ մերով առաջադրեմք Բարձու Սրբազնութեան Ձերում գումարել ընդ նախագահութեամբ Ձերով զմիաբանական ընդհանուր ժողով և ընտրել զտեսուչ տպարանի, զնախագահ և անդամ մի վանական կառավարութեան և զանձնափոխանորդ մի գիւանական խորհրդոյ, այլ և ի քննին առնուլ զխնդիր պահպանութեան կամ բարձման տնտեսութեան ագարակի Մայր Աթոռոյ և զընտրեալ պաշտօնեայս և զորոշումն ժողովոյդ վասն ագարակի առաջի առնել Մեզ ի հաստատութիւն և ի վախճանական տնօրէնութիւն։

Ողջ լերուք, զօրացեալ ի Տէր, պահպանեալ ի խնամս երկնաւոր Հօր և օրհնեալ յաւէտ ի Մէնջ, Ամէն։

ՄԱՏԹԵՈՍ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ

Ի 12 փետրուարի 1910 ամի

Նորին Սրբութեան այս կոնգակի համեմատ փետրվարի 19-ին կազմուեց միաբանական ժողով Տ. Գէորգ Արքեպիսկոպոսի նախագահութեամբ։

Ահա այդ ժողովի արձանագրութիւնը.

«1910 թուի փետրուարի 19-ին, երեկոյեան 7-ը ժամին տեղի ունեցաւ Մայր Աթոռի միաբանական ժողով նախագահութեամբ տ. Գէորգ արքազան արքեպիսկոպոսի. քարտուղար ընտրուեց տ. Իսահակ վարդապետ։

Մայր Աթոռում եղած բոլոր միաբաններէց ժողովի եկել էին քսան հոգի։

Յօտնկայս կարդացուեց Ազգիս Սրբազնագոյն Հայրապետի տարւոյս փետրուարի 12-ին տուած թ. 338 սրբատառ կոնգակը, որով պատուիրում է ընտրել՝ ա. — Տեսուչ տպարանի, բ. — նախագահ և մի անդամ՝ Վանական Կառավարութեան, գ. — Գիւանական Խորհրդի մի անձնափոխանորդ և դ. — Խորհրդածել և որոշում կայացնել Մայր Աթոռի ագարակը պահելու կամ վերացնելու մասին։

Գաղտնի քուէարկութեամբ ընտրուեցին՝

Ա. Տեսուչ Տպարանի տ. Արտակ վարդապետ 18 ձայնով,
Բ. Նախագահ՝ Վանական կառավարութեան՝ տ. Ներսէս
վարդապետ Մելիք-Թանգեան 17 ձայնով:

Գ. Անդամ՝ Վանական կառավարութեան՝ տ. Խորէն
վարդապետ Լազարեանց 11 ձայնով:

Դ. Դիւանական խորհրդի անձնավորխանորդ՝ տ. Բաղ-
րատ վարդապետ Վարդազարեանց 19 ձայնով:

Ե. Մայր Աթոռի ագարակը պահելու կամ վերացնե-
լու շուրջը տեղի ունեցած երկար թեր և գէժից յետոյ
քուէարկութեան դրուեց երկու բանաձև.

Ա. բանաձև տ. Մատթէոս վարդապետի՝—«այժմեա-
նից հաւանութիւն տալ ագարակից վաճառել ինչ որ աւե-
լորդ է, թէ կենդանիներից և թէ գործիքներից, ընտրել
մի մասնաժողով ուսումնասիրելու ագարակի ներկայ և ան-
ցեալ վիճակը՝ թէ կարելի է և օգտակար է պահել ագա-
րակը», այս բանաձևը անցաւ 12 ձայնով:

Բ. բանաձև տ. Ներսէս վարդապետի տ. Միքայէյ-
եան. —«այժմեանից վերացնել ագարակը», —այս բանաձևը
անցաւ 9 ձայնով:

Համաձայն առաջին բանաձևի, բայց ձայնարկութեամբ
ընդունուեց ճիշդ հոգուց բաղկացած մի մասնաժողով, որը
մի ամսուայ ընթացքում պէտք է ուսումնասիրէ ագարակի
անցեալ և ներկայ վիճակը և արդիւնքի մասին ղեկուցանէ
միաբանական ժողովին՝ ագարակի մասին վերջնական որո-
շումն կայացնելու համար. այս յանձնաժողովի անդամներն
են տ. տ. Բաղրատ վարդապետ, Մատթէոս վարդապետ
և Մկրտիչ սարկաւազ:

Այս ամենի մասին կազմուեց ներկայ արձանագրու-
թիւնը:

Նախագահ ժողովի՝ Պետրոս արքեպիսկոպոս

Քարտուղար՝ Խաւնակ վարդապետ

կիւրակէ օրը, Մետրոպ և Յուսիկ արքեպիսկոպոսներ ընթերակայութեամբ և Գրիգոր արքեպիսկոպոսի խարդավիշակութեամբ եպիսկոպոս ձեռնադրեց Երուսաղէմի պատմիարքի Կ. Պօլսոյ փոխանորդ Եղիշէ ծ. վարդապետ Զիլինգիրեանին, որ եպիսկոպոսական վկայականէր ստացել 1907 թուին:

Նորապսակ Եղիշէ որբազանը ծնուել է 1861 թուին Խարբերդ նահանգի Մեղրէ քաղաքում: 1879 թուին մտել է Երուսաղէմի ժառանգաւորաց դպրոցը, ուր դասընթացքն աւարտելուց յետոյ սարկաւագ և 1886 թուին էլ վարդապետ է ձեռնադրուել, 1905 թուին ստացել է ծայրագոյն վարդապետութեան աստիճան:

Նա պաշտօնավարել է օրպէս տեսուչ Բէրութում՝ Էրկու անդամ, վարել է Կեսարիայի Ս. Կարապետի վանքի նորաբաց դպրոցի տեսչութիւնը 8 ամիս ժամանակով, և վերադառնալով Երուսաղէմ՝ 1892-1895 թուին կարգուել է աւագ թարգման: 1897 թուին ուղարկուել է Բաղէշ առաջնորդական պաշտօնով, որ վարել է 4 տարի, և 1901 թուին վերադառնալով Երուսաղէմ՝ 4 տարի վարել է այնտեղի ժառանգաւորաց դպրոցի տեսչի պաշտօնը և 1¹/₂ տարի էլ աւագ թարգմանի պաշտօնը: 1905 թուին նշանակուել է Երուսաղէմի պատրիարքի Կ. Պօլսոյ փոխանորդ, և նոյն պաշտօնումն է ցայսօր:

Շնորհաւորելով նորապսակ Տ. Եղիշէ եպիսկոպոսին իւր բարձր կոչումն, աղօթում ենք՝ որ Աստուած զօրացնի նրան իւր կոչման պարտականութիւնը անթերի և սրբութեամբ կատարելու ի պայծառութիւն եկեղեցու, ի մխիթարութիւն ժողովրդեան և ի փառաւորութիւն իւր անձին:

Երևանի հայ հասարակութեան ներկայացուցիչները մի քանի օր առաջ գալով Մայր Աթոռ, ներկայացան Ղեհափառ Հայրապետին խնդրելու, որ Նորին Սրբութիւնը բաղդաւորացնի Երևանը իւր այցելութեամբ և օրհնի իւր հայրապետական թեմի նախաթոռ քաղաքը:

Նորին Սրբութիւնը ընդունելով այս հրաւերը ըստե՛

հաճեց յայտնել, որ փետրվարի 24-ին, չորեքշաբթի օրը կայացելի երևանին, Նշանակուած օրը երևանի փոխանորդ Տ. Խորէն վարդապետը մի քանի անձանց հետ եկաւ Մայր Աթոռ Վեհափառին ուղեկից լինելու, ճաշից յետոյ ժամը 3-ին, Նորին Սրբութիւնը ի ձայն դանդաղաց, յառաջընթացութեամբ ամբողջ միաբանութեան իջաւ Վեհարանից, մտաւ տաճար, աղօթեց և նոյն միաբանութեան յառաջընթացութեամբ ի ձայն դանդաղաց դուրս եկաւ տաճարից գիմելով գէպի շուկայի մեծ դուռը, ուր խուռն բազմութիւն էր խմբուած, Նորին Սրբութիւնը հրաժեշտ տուեց միաբանութեանը, վանքը իւր բացակայութեան ժամանակ յանձնելով Սինօգի տւագ անդամ Տ. Գէորգ արքեպիսկոպոսին, նստեց եռալուծ, վեց ձի լծած կառքը, օրհնեց ժողովրդին և ուղի ընկաւ հայրապետական շքով, բազմաթիւ շքախմբով, հանդիսաւորապէս ընդառաջեցին Վեհափառ հայրապետին ճանապարհի վերայ Փարաքար ու Զափարապատ գիւղերը:

Նորին Սրբութիւնը հասաւ Երևան երեկոյեան 5 ժամին և ընդունելութիւնը կատարուեց Ս. Սարգիս տւագ եկեղեցու փողոցի սկզբին, ուր խմբուած էր ահագին թուով ժողովուրդ ամեն ազգից: Հոգևորականութիւնը գիմաւորեց եկեղեցական թափօրով և պատշաճ շարականներով առաջնորդեց գէպի եկեղեցի, ուր բեմի առաջ սահմանուած սաղմոսն ու աղօթքը քաղելուց յետոյ Վեհափառ հայրապետը բարձրացաւ սեղան, քարոզ խօսեց, օրհնեց խմբուած ժողովրդին և յետոյ ուղղուեց գէպի առաջնորդարան, որ զարգարուած էր ամենայն վայելչութեամբ:

Հետեւեալ օրը, որ Ս. Վարդանանց տօնն էր, Վեհ. հայրապետը ներկայ եղաւ ս. պատարագին, նախագահեց թեմական դպրոցի դպրոցական հանդիսին և տօնի առիթով քարոզ խօսեց: Այնուհետեւ առաջնորդարանում ընդունեց երևանի բարձրատիճան պաշտօնեաներին, քաղաքային վարչութեան ներկայացուցիչներին, մահմետա-

կանների առաջադրանքին, որոնց մէջ էին Մակուի սարգարը և պարսից փոխ-հրապարտը:

26-ին ընդունեց Պ. Նահանգապետի այցելութիւնը և փոխանակեց:

28-ին կիրակէ օրը, ըստ ամենայնի գոհ երևանցիների սրտագին և շքեղ ընդունելութեամբ, ժամը 12-ին օրհնելով քաղաքն ու հասարակութիւնը դուրս եկաւ Երեւանից:

Նորին Սրբութիւնը ժամը 1¹/₂ ժամանեց Մայր Աթոռը ուղեկիցների մեծ բազմութեամբ և նոյնպիսի շքով՝ որով մեկնել էր և վայր իջնելով կառքից, ի ձայն զանգակաց, յառաջընթացութեամբ միաբանների մտաւ տաճար չռելեայն կարճ ազօթքից յետոյ օրհնեց խմբուած բազմութեանը, Երեւանից եկած ուղեկիցներին և նոյն կարգով բարձրացաւ Վեհարան:

Սինօդի անդամ Տ. Յուսիկ վարդապետը քառամսեայ արձակուրդ ստանալով փետրվարի 19-ին մեկնեց Մայր Աթոռիցս իւր հայրենիքը—Նոր-Նախիջևան:

Նոր-Արմաւիրցի պարոնայք Սիմէօն Գէորգեան, Ալէքսանդր Մելքոնեան և Գէորգ Յովսէփեան Սէֆէրեանները ի յիշատակ իրանց ննջեցեալների, Գէորգ քահանայ Սէֆէրեանի յորդորմամբ, ուղարկել են Լուսարարապետ Տ. Ղևոնդ կաթողիկոսի անուամբ Մայր Տաճարին նուէր արձաթապատ երկու շքեղ սաղաւարտ:

Տ. Ղևոնդ սրբազանը սաղաւարտները ներկայացրել էր Վեհ. Հայրապետին, խնդրելով հայրապետական կոնդակով օրհնել նուիրատուներին: Յիշեալ սաղաւարտները Նորին Սրբութիւնից յանձնուած են Տաճարին ի գործադրութիւն, և առաջին անգամ գործադրուեցին ս. Վարդանանց տօնի ս. պատարագին, որից յետոյ կատարուեց հանգստեան պաշտօն համօրէն հայ ազգի և յատկապէս նուիրատուների ննջեցելոց յիշատակին:

Տ. Յուսիկ վարդապետի հրաժարումից յետոյ տ. Մատթէոս վարդապետը ժամանակաւորապէս վարում էր դիւանապետի պաշտօնը: Փետրվարի 19-ին միտքանական ժողովով անձնավորեանորդ ընտրուած տ. Բագրատ վարդապետը հայրապետական կոնդակով հաստատուեց դիւանապետ, և վարում է իւր պաշտօնը:

Վեհափառ Հայրապետը բարեհաճեց Մեծ պատին քարոզիչներ կարգել Վաղարշապատի համար

Բագրատ, Մատթէոս, Գարեգին, Ներսէս և Արտակ վարդապետներին,

Աշտարակի կողմերում Գարեգին վարդապետին,

Սարգսրապատի գաւառակում Արիստակէս և Արտակ վարդապետներին:

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ ՏԱՃԿԱՍՏԱՆՈՒՄ

Խառն ժողովոյ երէկուան խորհրդակցութիւնը. Խառն ժողովն երէկ Ս. Պատրիարքին բնակարանը խորհրդակցութիւն կատարեց եկեղեցական և աշխարհական անդամներու մեծամասնութեան ներկայութեան և կարծեաց փոխանակութիւններ ունեցան 4-5 ժամու չափ: Պատրիարքական հրաժարման պատճառներուն և մինչև այսօր տեղի ունեցած խորհրդակցութեան վրայ: Անպաշտօն կերպով եղած խոստումներ և առաջարկներ ալ յիշուեցան, բայց Վարչութիւնն որոշեց խնդիրն իր ամբողջութեամբ ներկայացնել Ազգ. ժողովոյ յառաջիկայ ուրբաթ օրուան նիստին, պարզելով նախարարական վերջին տեսակցութեանց արդիւնքն և այն պայմանները, որոնց մէջ Ս. Պատրիարքը պիտի վերադառնայ իր աթոռը: Եթէ Ազգ. ժողովն իր հաւանութիւն տայ, Ս. Պատրիարքը պիտի վե-